

4. Զգացումի բարոյագիտութիւն Էջ 208

(Moral Sense Theory),

ուր բարոյական արժեւորման որպէս ելակետ կը նկատուին՝ վերոյիշեալ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի զգացումները:

Ասոնց կողքին հարկ է նաեւ յիշել 20-րդ դարու երկրորդ կիսուն յառաջացած նորագոյն տեսութիւնը.-

5. Զննախօսութեան բարոյագիտութիւնը Էջ 218

(Discourse Ethics),

որ Կանտի պարտագիտական տեսութեան կը հետեւի եւ ուր բարոյական արժեւորումը, խմբակի մը կամ ընկերութեան մը մէջ, տեղի կ'ունենայ իրայատուկ կանոններով օժտուած քննարկումի ու խօսոյթի միջոցով:

Իսկ *պայմանագրային տեսութիւնը*⁽⁵⁷⁾ (Contractarianism), ինչպէս յիշուած է *Բարոյագիտութեան Հիմնաւորում*, Մաս – 4ի մէջ, բարոյագիտութեան տեսութիւն մը ըլլալէ աւելի, ընկերային – քաղաքական ու արդարութեան – արդարադատութեան ոլորտներու վերաբերեալ տեսութիւն մըն է: Այս պատճառով, այստեղ, անգամ մը եւս պիտի չներկայացուի:

Այժմ պիտի ներկայացուին վերոյիշեալ բարոյագիտական հինգ տեսութիւնները, որոշ մանրամասնութեամբ:



(57) **Պայմանագրային տեսութեան** (անգլ.՝ Contractarianism, գերմ.՝ Vertragstheorie) մասին տե՛ս Մաս – 4, Էջ 150: